

ՊԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Յր.
Տարեկան 6 " "
Վեցամսեայ Արասահմանի համար 15 " "
Տարեկան 8 " "

Անկերկայի համար 3 Յր.
Տարեկան 4.50 " "

Մանուգլան տղր առ ղին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սակերիլ կ. երեքին անկերկաներու համար 20 0/0 զեղչ կրչայ:

Վառեայի համար մոտ 10 սակերիլ

ՇԱԲԱԹ

Նախակ էր ցրամ որդի հիւրագրութանս հասցիքն

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4. Vienne

du journal „om“ (Bulgarie)

Արասահմանի համար մոտ 10 սակերիլ (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարիոյ համար մոտ 15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չէն տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՍԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐ ՏԿՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱԲԱԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՉԻԹՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հէ՛ք պատուելի: Ու այլ եւս նախատինքի մը պէս չէ որ այս բարձր քեզ կը նետեմ, վասն զի ա՛լ իսկապէս պատուելի ես գունեքու յիշատակդ մեզ համար, անոնց համար իսկ որոնք քու ողջութեանդ շնամակերեցան քեզի: Յեղափոխական վերջին քարոզէր ետքը, զոր ունկնդրեցի, շարժումներուդ շնամակ ուժովն թիւնը և խօսուածքիդ բամբ ու միտնանք շնոր շնամ գիտերի՛նչ շնորման մը՝ երկմտութեան մը մատնեցին զիս քու հոգիիդ, քու մտածումիդ իսկութեանը մասին: Ու մինչև այն րոպէն, ուր դաշտնները դեռ չէին աւրշտկած մարմինդ, տարտամ մշուշի մը մէջէն էր որ աչքիս կուրուագծուէր քու խիստ, անայլայլ և մտախոհ դիմագծութիւնդ: Հիմակ այդ մշուշը վարատած է, ու անպիտ վերքերէդ ծորան ծորան վազող արեան կաթիլները լոյսի ծիրանիփայլ գոլորշիներ կը ձփացնեն քու շուրջդ, ողջակէզի մը լուսապսակովը բոլորելով քեզ:

Մահուան վտանգին զէմ քու գիտակից ու անվեհեր խիզախութիւնը զոր պահեցիր երբ մէկ հատիկ զաւակդ հայրական ուսք խանդաղատանքի ապացոյցներ կը պահանջէր քեռէ սրտածմիրկ աղաղակներով, ու այն արհամարհանքը զոր նետեցիր՝ պատուելիական քարոզչութիւնը շարունակելու համար քեզ մատուցուած շուկայիկ ու պարարտ առաջարկին, բաւական են արդէն յարգանքի զգացումով մը լեցընելու համար մեր սրտերը քու յիշատակիդ առջև:

Գուցէ սխալ ըլլար յեղափոխական այն քայլը զոր մղուած էիր առնելու, գուցէ անկեղծ հաւատքիդ թելագրութիւնները ունայն գործունէութեան մը խոյանքին նետած ըլլային քեզ, բայց այն խանդաղաւ, անձնա-

մատոյց և խիզախ եղանակն իսկ որով այդ քայլդ առիր, արժանիքներուն ամենէն մաքուրին պատիւովը կ'ածեն քու ա՛լ տոգունած ճակատդ:

Ի՞նչ ո՛ւշ՞ դիակիդ հոտը արդէն առիր, ու ահա որ սոսկումը շկանեցուց քեզ. գործունէութեան ճամբաներուն վրայ կը վազէիր, մեծաբաց քայլերովդ ու ճօճացող թեւերովդ, կը վազէիր երբ վտանգին սեւ ստուերները՝ քստմնելի բուերու թեւաբախումներով՝ շուրջդ կը յածէին, քովէդ կանցնէին. կը վազէիր տեսլապաշտի մը պէս որ ծովերէն, ձորերէն կը ցատկէ՝ իր շլացած աչքը քաշող ճաճանչին հասնելու գերբնական ճիգով: Եւ ահա յանկարձայն վազքիդ մէջ՝ եղբունոտ մասներ՝ ճանկերու պէս՝ երկնցան՝ կոյր դաւաճան պողպատներով վիճուած, մխուեցան ու ելան մէջդ՝ անկուշտ, անյագ, ոխերիմ, ճիւղներու նման. հոգիդ բրցունելէ ետքը, այդ մազիլները մարմինիդ, միտիդ մոլեգնեցան, յօշ յօշ պատուեցին քեզ. և, աւա՛ղ, քու եղբայրներդ էին ասոնք, որոնց փրկութեան համար կը վազէիր հեւ ի հեւ, գործունէութեան լայն ճամբաներուն վրայ:

Ո՞ր հոյը քու այս ճիւղափոխարինաչաղախ դիակիդ առջեւ սոսկումի, աղապատանքի ճիւղ չպիտի արձակէ, ու կաթիլ մը արցունք չպիտի կաթեցունէ ու լայնափնեկ խոցերուդ վրայ:

Մեր աչքին, բոլոր հայերուն աչքին բարձրացար դուն, կուսակցականութենէ դուրս ելար, տարաբախտ գործիչ. ու թէ եւ մաքառումի խրոխտ ծառացումներուն մէջ չի՛նկար շնչասպտակ ամենէն հոյակապ ժեսդին մէջ սառած, բայց գաղափարի, հաւատքի, համոզումի խորանին քու ջերմեանդ ուխտաւոր շտապարիդ մէջ է որ գարնուած ինկար նորէն՝ մարտիրոսի մը պէս:

Ու ես, քու գաղափարի հակառակորդդ, կսկիծով ու յարգանքով կը խոնարհիմ հիմա ծակծակ գիւս.

կիդ վրայ, որուն կարմրաշուրթ վերքերը՝ մարդկային անիմաստ վայրագութեան ապացոյցներ՝ քու յիշատակիդ յաւերժացումը կը նուիրագործեն, ու անոնցմէ՛ հոսած արիւնը կերթայ ամփոփուիլ այն սկիհին մէջ որ հայ Տառապանքի անհուն բազմին վերայ կը պահուի երկիւղած գուրգուրանքով մը, և ուրկէ պիտի արգասաւորուին ազգային փրկութեան սերմերը: Մատուցանականութեան մէջ, թող հոգիդ հրճուածքէ սարսուռայ այս գաղափարէն. եղբունոտ մասները չը պիտի կրնան մինչև ևս երկննալ քեզ վրդովելու:

Շաւարշ

ՁԱՅՆ ՄԵՆ ԱՆ ՖԵԼԻՊԷՆ ՊՈՒԼԿԱՐԱԶՍՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԻՆ ԱՌԹԻԻ

Ինչ շարժման կամ միաժամ եւթադրութիւններ ալ որ ընեն կարգ մը մարդիկ... այս կամ այն խնդիրին վրայ չը անհատի մը յայտնած կարծիքներուն մասին, մանաւանդ երբ անոնք Շաւարշով յայտնուած ըլլան, ասոնց հետ մէկտեղ կուն խնդիրներ՝ որոնց մասին չէ կարելի լուռ մնալ մի միայն առ կարգի ենթադրութիւններու տեղի չի տալու նկատմամբ, երբ անդին աւելի կարեւորագոյն նկատումներ կը հարկադրեն գրել:

Պուլկարազայոց առաջնորդութեան խնդիրը առ խնդիրներէն է, որ սոց. մէտիստի մը ստացած է այսօր:

— Ճանր՝ մասնի գրելու է. նախկին գրելու չէ, մարդը քաջալերելու է. յուսահատեցնելու չէ՛ր պէս ցնդիփնդի առարկութիւնները մէկ կողմ պէտք է նետուի, և ամէն բան շիտակ ըսուի, քանի որ վաղը, ընտրուած վարդապետին լաւ կամ գէշ կողմերը ծաղրելու իրաւունքը պիտի ունենանք: Պուլկարիոյ հայոց առաջնորդութեան խնդիրին վրայ պէտք է յրջօրէն անդրադառնալ, պէտք է ծանօտեան շարժիլ, ասանց ազգայական կամայականութեան մուտքը թողադրելու հոն. ուղղակի հասարակութեան շահը աչքի առջև ունենալ, որովհետեւ, վաղ անցանք օգուտէն, ժողովուրդին — ո՛չ թէ ազաներուն — նոր ՊԱՏՈՒՂԱՍ մը, նոր պիշաւ մը տալու — շատու խնդիրն է ան, կարճ խօսքով:

Եւ ընդհակառակը, Պուլկարազայոց վարչութիւնն է եղեր, մեր Այցելու հովիւն է եղեր, անանկ տարօրինակ — յըսելով ծիծաղելի — փութիտութիւն մը ցոյց կուտան առ մասին որ. պարզապէս սկզբնական մալ փախցնելու, սպաւորութիւնը կը թողուն դիտողին վրայ:

Մեր հովիւը տակաւին հազիւ երեք չորս քաղաք այցելեց, ուր կարեւոր գործ մըն ալ չի տեսաւ:

Հոս, Յիւլիպէի մէջ գոնէ, զինքը շրջապատող մասնախումբին շրջանակէն դուրս չելաւ, հասարակութեան հետ չի շփուեցաւ: Զինքը շրջապատողները ի՛նչ ձեւով որ ներշնչեցին, ան սպաւորութեան տակն է ան:

Տակաւին շատ մը քաղաքներ ունին կարծեմ անանկ թաղականներ, որոնք կանոնաւորապէս չեն ալ ընտրուած և ընդհանուր համադրանք չեն վայելեր:

Ասոնք և ասոնց պէս խել մը խընդիրներ առանց կարգադրելու, առանց նոյնիսկ Պուլկարիոյ բոլոր քաղաքները այցելելու, միայն զինքը շրջապատողներու ուսուցիկ տեղեկութիւններէն շրջած հապճէպ գործի ձեռնարկելը՝ լաւ արդիւնք չի տար:

Փափաքելի էր որ մեր հասարակութիւնը ունենար այն գիտակցութիւնը, որ իր գործերը ինք իր ձեռքով կարգադրէր, առանց անոր զեկը յանձնելու կղերին. և անոր ծախսուելիք սասարհազար ֆրանքները, ան ալ ներկայ ժամանակներուն մէջ, ծախսուէր աւելի անհրաժեշտ պէտքերու, միեւնոյն ատեն մխիթարական է տեսնել որ, հասարակութեան բաւական ստուար մէկ մասը հասած է այն համոզումին թէ՛ մեր ներկայ վարդապետներէն ու եւ օգուտ յուսալ անխնայութիւն է և հետու է անոր փոշերը համբուրել է այլեւս: Մենք Յիւլիպէի մէջ, ասանկ մտածող հարուստներ ալ ունինք, թէեւ թիւով սակաւ:

Ինչ աչքով ալ նայի սակայն հասարակութեան այս կամ այն տարրը կղերին վրայ, քանի որ մեզի, Պուլկարահայերուս, Առաջնորդ մը կուզեն տալ, ժողովուրդին ազգային և եկեղեցական շահերը պաշտպանելու գիտումով, չենք կրնար առարկութիւն մը ընել:

Թէ ի՛նչ տեսակ առաջնորդ մը պիտի ունենանք, ո՛ւր պիտի մղէ ան հասարակութիւնը, ազգային ի՛նչ զգացումներ պիտի արթնցնելու ճգնի, ժողովուրդը պիտի թմբեցնէ, ստորէպնէ՛ թէ՛ պիտի ոգեւորէ և իր պատմական ցաւերուն գիտակից ընէ,

պիտի կրնա՞յ օգտակար ըլլալ մէկ
խօսքով, ստոնք հարցեր են, որոնց
մասին հիմակուց բան մը չենք կըր-

նար ըսել և որոնք մասամբ մըն ալ
կտխուս ունին մեր օրո՞վ և օրնչ գի-
տակցութեամբ ընտրելէն :

Հիմա միայն տեսնենք թէ՛ ժողո-
վուդիկն նախոր ընտրութից Առաջ-
նորդի մը մասին ո՞ր աստիճան կը
յարգուի ժողովուրդի ձայնն ու իրա-
ւունքները :

— Թող տար քաղաքներու թաղա-
կաններէն կամ քանաւաններէն մէկ
մէկ հողի հաւաքութիւն Սօֆիա և Ընտ-
րողական Ժողով կազմելով, ընտրեն
նշանակուած երեք վարդապետներէն
մէկը . . .

Ահա թէ ի՞նչ տեսակ հրահանգ կը
տրուի Պոլիսէն :

Հո՞ն է որ ժողովուրդին իրաւունքը
կը յարգուի, եթէ ատանկ է, վա՛յ
ժողովուրդին գլխուն :

Նախ հարց է թէ՛ մեր թաղական-
ները մեծ մասամբ ժողովուրդին օրի-
նաւոր քուէովը ընտրուած են, կամ
ներկայիս մէջ անն խաւերու հա-
մակութիւնը կը գրաւեն : Աստա-
միկն հարց, որուն պատասխանը ժըխ-
տական է, քանի որ ատ բանը չը-
բաւ մեր Այցելու հովիւը :

Որո՞նք են թաղականներու զեկը
իրենց ձեռքը ունեցողները, կա՞ն
հոն բուն ժողովուրդին, էսնաֆ կամ
գործաւոր գաւազաններն պատկանող
անհատներ ալ : — Չեմ յուսար : Մեր
թաղականները ազգանքներու շնորհիւ
են մեծ մասամբ : Աս երկրորդ հարց :

Ատ թաղականները կրնա՞ն ներ-
կայացնել ժողովուրդին ձայնը, կըր-
նա՞ն յարգել գիտնալ անոր իրաւունք-
ները : — Չեմ յուսար, որովհետեւ ա-
նոր, ժողովուրդին ձայնը անուշով չի
պիտի ներկայանան հոն, իրենց ձայ-
նը միայն պիտի ներկայացնեն, քանի
որ չեն պիտի թէ հասարակութիւնը
ո՞ր վարդապետին կը համակրի : Ա-
նոնք պիտի ընտրեն այն վարդապե-
տը՝ որ իրենց ազգայականութեան
հաճելի երեւցած է կամ կը յուսան թէ
կրնան շոյուել անկէ : Իրենց հոգի է
հասարակութեան փափաքը : Ետտ

չառ, առանց ճանչնալու քիօր-սաշի
մը պիտի նեղեն քուէաւորին մէջ,
որ վարդապետը կըլլայ թող ըլլայ :
Բայց վաղը ժողովուրդին գլխի վրե-
շակ պիտի մնայ եղեր, աս ալ բա՞ն
է : Աս ալ երրորդ հարց :

Որպէս զի աս պատեհութիւններուն
առջեւը միանգամ ընդմիջաւ առնուի,
և բուն այնքան գիտակից, բայց գո-
նէ օրինաւոր սահմաններու մէջ ըն-
տրուի Առաջնորդը — հարկ է որ նախ
մեր Հովիւը այցելէ Պուլիարիոյ բոլոր
հայ գտնուած գիւղաւոր քաղաքները,
կազմէ կանոնաւոր թաղականներ, Եւ
յետոյ, ինչպէս որ թաղական կըն-
տրուի, այնպէս ալ ժողովուրդին քը-
ուէն ատնէ այս կամ այն ընտրելիին
մասին և առաւելագոյն քուէ ստացո-
ղը յանձնարարուի նորէն ժողովուր-
դին կողմէ ընտրուած պատեհութեան
մը :

Ամենէն կարճ և օրինաւոր ճամբան
ան է :

Իսկ թէ նշանակուած վարդապե-
տներէն որո՞ւ աւելի յարմար կը թուի,
կամ քիչ թէ շատ գիտակից ընտրու-
թիւն մը բնելու համար ի՞նչ կարելի
է ընել, ասոր կանգաւորութեամբ յա-
ջորդով :

Թողալից



Վառնայի Հնչ. Մասնաճիւղի
խորին ցաւօք և կոկիծահար, կու-
գայ ցուծել հայ հասարակութեան,
եղբայրասպան ձեռքերու զո՞հ քա-
ցող իր երկու հայրենանէր և
թանկագին ընկերներու :

Շ Ա Հ Ե Ն — Մ Խ Օ Յ Ի
Ե Ն

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Չ Ի Թ Ճ Ե Ա Ն Ի

Եղբրական մահը, և յայտարարել
թէ Հայրենիքին նուիրուած այս
երկու Չոհ րուն անմտաւոր յի
չատակը յարգելու համար հան-

գիտաւոր հոգեհանգիստ պիտի
կատարուի վաղը կիրակէ, քա-
ղաքիս Ս. Սարգիս եկեղեցւոյն
մէջ, և յետ աւարտման արարո-
րութեան ատենախօսութիւններ
պիտի ըլլան բակի մէջ :

Ուստի կը հրաւիրենք Վառնա-
յի Հայ հասարակութիւնը, իրուն
բազմութեամբ, մասնակցելու այդ
սուգի արտայայտութեան, որով
անգամ մըն սլ ցոյց տուած պի-
տի լինի իւր խորին համակրու-
թիւնը դէպի այդ հայրենանէր
և անձնուրաց գիւնորները :

Թ Ղ Թ Կ Յ Ո Ւ Թ Ի Ն

Ռուստու ք 17 Յունիս 1903

Ձէյթունի մէջ արտոլ սխառ ամեն
զգայուն հայ սրտին մէջ զարթեցող
վշտի խորին զգացմունք : Ամեն կողմ
(Պուլիարիոյ), շնորհիւ մատուցի փութի-
կտութեան բացուեցան հանգամա-
կու թիւներ յօգուս ծաղկախոտե տա-
նապող քաջարի Ձէյթունցիներուն :
Այստեղ անակնկալ մըն էր մեզի հա-
մար, անտեղ մեր անվերջ պահպանո-
ղական թաղական խորհուրդը հան-
գրկանութեան ձեռնարկած ինչպստ
Ձէյթունին Սաղայն խիոյն ակնառ-
տես եղանք այս անգամ ալ աւելի
սարկական յայնիսկ ազգային ար-
ժանապատեթեան և հայ ժողովուր-
դին կամքին ու սրտին դաւաճանող
արարքի մը, որ իր տեսակին մէջ ա-
մենամեծ արարը կրնայ համարուի
մեր թաղական խորհուրդին :

Ձէյթունցի իր անարատ հայկա-
կան կեանքով ու բարեբերով, իր ազա-
տական ու քաղաքացիական բոլոր
վնասներն անանձնալուծութիւններով,
հայկական անեղծ տարր մը մնալէն
պատ մեր ազատագրական դասին ալ
ամենայնպէս զն և անընկճելի զօրա-
վիզը հանդիսացու երկար տարիներ :
Ամեն քիչ շատ իր հետաւոր և ժողի

անցեալի պատմութեան անդհանր հայ
սրտին մէջ ահագին տեղ մը անշուշտ
գրտած է Ձէյթունցին : Մենք անոր
անունը խորհին յարգանքով և պատ-
կաստանքով միայն կրնանք յիշել : Ու
բնիկ այսպիսի պարագաներու մէջ
զրեէ ինչպստ Ձէյթունի բացուած
հանգանակութիւն մը այստեղ անյա-
շուղ անցնել չէր կրնար և ըստ բաւա-
կանի արդիւնաւոր կըլլար : Ու մեր
թաղական աղաները ատիկա զգալով,
տեսէք թէ ինչպէս ըմբոսնած են եղեր
իրենց պարտականութիւնները կիւր-
կից մարտիկներուն հանդէպ, ինչ
պէս կատարեցին այդ պարտականու-
թիւնները և թէ ինչ օգտակարու-
թիւն հասցուցին Ձէյթունցիին :

Նախ քան հանգանակութեան ձեռ-
նարկելը, մեր աղաները կորոշեն
Ռուստու քէն հաւաքել յիսույն 300 ֆո.
և այդ պատճառաւ կանխապէս չ'սրա
մը կը կազմեն որոշելով ամեն մարդու
ինկած րաժիւրը : Դժբաղաբար կը
գտնուին չի համակերպուող, անհա-
պանող մարդիկ և 40 ֆո. աւելի կը
գոյնայ 300 ին վրայ : Ամբողջ գումա-
րը 340 ֆո. կուղարկեն Պատրիար-
քարան : Տեսէք, շնորհիւ ազգասէր,
Ձէյթունը սիրող մեր թաղական խոր-
հուրդին ամբողջ Ռուստու քի հայա-
թիւնը Ձէյթունին կը նուիրէ . . .
միայն երեք հարիւր քառասուն ֆո. :

Ռուստու քի մէջ կան ժողովուրդապէս
30 հայ հարուստներ, որոնք հարիւր
հազար ունին և ընդամենը 340 ֆո.
կուղարկեն Ձէյթուն : Երեք հարիւր
քառասուն ֆո. : Թողէք պարզ խա-
նութեան և բանալի կամ միջին կոչու-
ուած դասակարգը, միայն հարուստ
ներէն կարելի էր հանգանակել ոչ
360՝ ալ գէլթ 8,000 : Աս որ ամենա-
կարեւորն է, ամէնքն ալ, բոլոր գա-
սակօրգրոր արամաղիբ էին տան
Ձէյթունին Սաղայն, ինչպէս ըստիք,
շնորհիւ մեր ջանասէր (Պ) թաղակա-
նութեան այդ գումար սահմանաօր-
ուեցաւ այդպիսի խիստ կիրաւի Ապի-
կա միջին կրկնակի դաւաճանութիւն
չէ, ահա թէ Ձէյթունցին կը տառապի
անօգնական — և Ռուստու քի հայր

ՍԵՄԻՆ ԱՌՋԵԻ

Տ. ԲՈՒԼԱՆՕՅ

Ձեզի, ազնիւ ընկերու-
նիկներս : Ս. Պ-նաե,
Պ. Պետ-ն նե թ. Ս-նաե
Ա. Յ.

(Շար. նախորդ քիւն)

Բաղդասարար Սթոյչեվան աւելի
հանգարտ էր : Ետտ չէր զգածուեր
բանաստեղծութենէ. ու բնաւ չէր
կարգար օտանաւորները կամ ման-
րավէպերը, որոնք կը հրատարակուե-
ին ընկերվարական երկու հանդէսնե-
րուն մէջ : Այսու հանդերձ թուրկէ-
նէֆին հզօր խօսքը զպաւ անոր՝ տա-
կաւին չեբերած լարերուն : Միթէ
քարասիօր է գիւղային ուսուցչուհի
ըլլալով :

Աւելիկա ընդհատեց լուծութիւնը,
որ այնքան կը տանջէր ժիվֆան :
Ենտրակալութիւն յայտնեց այս սո-
ղերուն թարգմանութեան մասին, ո.
րոնք, ինչպէս ըսաւ, անգամ մը լը-
սողը չպիտի մտնայ, ու չէր գիտէր
թէ ինչպէս ներդրութիւն խնդրէ,

քիչ մը առաջ ժիվֆային խորունկ
ու տեւական համոզումներուն վրայ
կատակած ըլլալուն համար :

— Հիմա կը հասկնամ, եղբրկացուց,
թէ չպիտի կրնա սօքթօրին պէս
մարդու հետ ամուսնանալ . . .

Բայց նորէն քըքիչ մը արձակեց .
— Սաղայն միս կողմանէ, այն-
քա՛ն սիրտս կուզէր պարել . . .

— Է՛, միայն սօքթօրը մարդ է,
գիտել տուաւ Իրինա խորհրդաւոր
կերպով :

Ամենքը սկսան խնդալ :
— Միայն սօքթօրը մարդ չէ, հար
ցընելու է իր, ուղղեց Սթոյչեվա միշտ
կատակով ու սրամտութեամբ :

— Է՛, ըսածիս համար իրաւունք
չունի՞մ՝ յաղթանակը տարաւ աշա-
կերտուէին :

Ժիվֆա մտատանջութեան մէջ ին-
կաւ :

— Սթոյչեվան յարեց .
— Իննիկեցած էի որ մտածեցի թէ
. . . Միթէ կարելի՞ բան է . . .

Միթէ կարելի՞ է, ոչ Ոչ անիկա,
ոչ Իրինա, ոչ ալ Մարիքա չէին հա-
ւատար թէ ժիվֆա պիտի ամուսնա-
նայ Իրոյօժօֆին հետ : Իսկ ինքը,
ժիվֆան, գիտէր թէ բարեկամուհի-
ներուն կարծածին յափ անկարելի չէ :
Անիկա գիտէր թէ գիւղային ուսուց-

չուհին չկրնար զայն հասկնալ, ո-
րովհետեւ բնաւ զգացած չէ ու չպի-
տի հասկնայ ինչ որ տեղի կուսենայ
անոր հոգիին խորը, մտածումներուն,
զազափարներուն, համոզումներուն
քառսին մէջ :

Կրեթէ առանձնացած, շարունակ
մտաւորական աւելի ցած մակարդակ
ունեցող մարդու մէջ ապրելով Սթոյ-
չեվան չէր կրնար ժիվֆային միջա-
վայրի մարդկիւր ճանչնալ, բան մը
միայն շատոնց զրոտած էր. թէ ժիվ-
ֆային բնաւորութեան մէջ այս րժուա
գական», «արիստօքրատիական» բան
մը կայ, ինչպէս արտայայտեց : Ա-
ւելի չէր ճանչնար իր պաշտօնակցու-
հին : Աւ ընհանրապէս չէր կրնար
գիտնալ թէ մեր գաղութիւններէն զատ
մենք ունինք նաեւ մտածելու կերպ՝
յատուկ միայն որոշ արտութիւն-
ներու, նաեւ զգացու. . . ձգտում-
ներ, որոնց մեր պաղափարներն ուղ-
ղութեան կրնան տալ, զԺժարատար
ոչ միայն, բայց կատարելապէս, տի-
րապէս չեն կրնար զնկալաբեր . . .

Իրինա պիտի հասկնար, եթէ իր
մէջ դարձնէր ուշադրութիւնը : Ս-
թոյչեվան ունէր ժիվֆային ու Մա-
րիքային գաղափարները : Բայց ի՞նչ
տարբերութիւն կարողի կողմանէ,
նոյն իսկ բնութեան կողմանէ, պի-

տի բռնեք, անոնց զգացումներուն
միջեւ՝ զրգուած քիչ մը առաջ կար-
գացուած անմասն խօսակցութեան
անոնց ու անոր զգացումներուն մի-
ջեւ, եթէ ենթադրենք իսկ պէտք
է որ ենթադրենք, թէ ունի զգա-
ցում, որքան ալ զգայուն չըլլար :

Սթոյչեվա որբուհի մըն էր՝ ոչ-հա-
րուստ բարեբարներու օգնութեամբ
դաստիարակուած Ու կրթոր՝ իր
ընկերվարականուհի՝ ընդունեց հա-
լածուել, նախատուել, գիւղէ գիւղ
ճամբարից տղաքները կարգացնելու
եւ գիտով գիւղապետներու ու ապա-
կանուած քանաններու հետ սիրտ
նախընդուն : Երբոր սկսաւ թափա-
նական, գրեթէ արտիքրատական
կեանք վայել, այն տանն Սթոյչեվա
չապասեց որ սոսկալի ձայնը սպառ-
նալիքով ըսէր իրեն մտիր ուրեմն,
որովհետեւ նոր վարելիք կեանքը
մինչ այն ատենուանէ գատուած չի
գուտով, որուն սեմինն վրայնէ
պէտք էր որ Սօֆիա Ռէյոլֆա ան-
նի : Սթոյչեվային մանկութիւնը, ա-
չակերտութիւնը կը ներկայացնէին
տիւուր սեւ օրեր, յաճախ ոտակո-
ւալուած ու արցունք թափած էր :
Մայրական համբարներ չէր գիտեր
Գլխութիւն կրեմն, բայց անօթի
չան առջեւ հայ նեակու պէս . . . կեպի

հոր 300 ֆունտ կուղարկե... թիւ 1, ա- յօթ մեզի: Մենք գիտակից ոճրա- գործներ ենք:

— Մտաւոր մըն է որ Օրմանեանի փոխանորդ վահան վրա: Յակոբեանը աշխույժ էր: Այսօր մեկնեցաւ դէպի Միլիտարէ, կղերականութեանը մեր մէջ այժմ գործէ պարտաւէ: Անոր բաժինը լոկ խօսքն է այլեւս: Այս տեսակէտէն դատելով Օրմանեանը չէ սխալած իր փոխանորդի ընտրութեան մէջ: Կատարի ալ փոխանորդ... հոս գալէն ի վեր այլեւս ձանձրացանք զանազան ողբերգութեան հասցիներ գովեստ- ներ և ատրակախ շողորդութիւն- ներ լսելու եկողներու թիւին: Փոխա- նորդի քով ամեն հարուստ ժողովուրդ պա- տաստի տեղ կանցնի և տեսէք այդ պատասանները լզելու գաղտնիքին ինչպէս հրաշալիորէն կը սիրէ Օրմա- նի փոխանորդը: Եկեցան... էֆէն- աի, երանի քեզ: էֆէնաիս պնդու- նակող քարոզները: Պոլսական աղտոտ բարեք, կեղծիք և շողորդութիւն միայն կրնան ներարկել ժողովրդին: Փոխանորդի քարոզները, իրենց ան- վերջ սկզբներով, այդ օգտակա- ռութիւնը միայն կրնալ ունենալ և ուրիշ ոչինչ:

Անցած շաբթու փոխանորդը Ընդհ. ժողով մը կը գումարէ, ուր կը կար- գադուրի Պուլիարիոյ հայ Առաջնորդի խնդիրը: 10,000 ֆունտ աստիճան պիտ- ճէ մը կը յատկացուի ապագա Առաջ- նորդութեան և այդ գումարը իրեն- սօգտային քննարկ Պուլիարիոյ բոլոր հայաշատ քաղաքներուն համեմատա- բար կը բաժնուի: Թէ այդ ժողովով որպիսի լուծարարած են ժողովրդի ի- ռաւունքները և ապօրինի կերպով անորինձն անոր գործը բացառապա կերպով կազմակերպուի: այն հանգա- մանքը, որ փոխանորդը ժողովին կը հրահրէ ձուտ 30 հոգի — փոխանակ բառին բուն իմաստով ընդհանուր Հրա- պարակային ժողով մը գումարելու — ուր 15-16 ներկաները կը զեկաւար- ուին ժողովրդի շահերէն բոլորովին հեռու նկատուիներով:

— Անցած շաբթու տեղս սկսեալ հրա- տարակալի վեհաժողովին շաբթա-

քին անմիջապէս անոր դպրոցն աւարտելէն ետք չէր նշմարել հրապարակ վարդա- կարմիր ապագայ մը: ու երբոր սկը- սաւ ապրիլ ինչպէս կապրէր գետ աղ- քառ, թափառակալն ու զրկուած, ա- ռաջուան չէր գատուեր: առաջուանը բան մը չէր զսնիր:

Ժիվքան որքան կը տարբերէր ան- կէ: Մերք տարիէ ի վեր ուսուցչա- կան պաշտօն կը վարէր, բայց զիւ զային ուսուցչուէրի կրկին ամսավը- ձարով, բարեկեցիկ ու երջանիկ կեանք մը կանցնէր մօրը զուրգու- թանքներու տակ սիրտած ու պաշ- տուած, տան մէջ խօսուի ու անհը- նազանդ էր: Դուրսը ուրիշ էր. պարկեշտ, գնդակահար, դարձած օ- ռիւրդ ժիվքա գոր ամէնքը կը յար- գէին, կը պատուէին նոյն խկ ա- նոնք, որոնք գիտէին թէ իրենց կես համարիս չէ՛ համարուած ըլլալով այսքան օրինակներէ թէ յառաջիկ- մական գաղտնիքները երիտասար- ղութեան համար կը նմանին զար- նան գեղեցիկ ու հոտուէտ ծաղիկնե- թու, որոնք կը թափին տեղի տա- յու համար կողմը պտուղներու, ինչ որ տուած է, կուտայ ու պիտի տայ հաստ ծառին ամեն մէկ ճիւղը, որ չկրնար ուրիշ պտուղ բերել: Անոր

թերթը, ինչպէս արդէն իրենք ալ կը յայտարարեն, ասիակ շին շնչակեան կուսակցութեան երրորդ պայտնա- կան օսկանը պիտի ըլլայ շնչակէն և Երիւսաւուդ Հայաստանէն յետոյ, Ե- րեւի հրապարակը այժմ աւելի քան երբէք պարարտ նկատեցին խօսքի գործունէութեան համար և ուժգին գարկ տալ կաշխատին այս վերջինին, որովհետեւ ոչ մէկ յեղ. գործունէու- թիւն ցոյց չի առած երեք հաստ օս- կան կը հրատարակեն: Պիտի գրաւեն հասարակութիւնը, պիտի տիրեն հրա- պարակին ամբողջ... Աւելի ինչ խօ- սինք, սա ալ իրենց ոճրագործու- թիւնները պաշտպանելու համար փաստաբանական ասեաններէն մէկը պիտի ըլլայ: Գրեն տեսներք մինչեւ երբ. թող խօսին:

Սուրեն

ՆԱՄԱԿ

1903 Մայիս 14 վտի... գիւղէն Սիրելի զխաւորս Պուլիարիոյ Ծիլիարի

Մարտ 24ին խրկածդ նամակն հասնողեք երկու լիբայիս ստացած ենք. ուստի ներկայիս նեղ վի- ճակն և անտանելի ցուերն կը օ- տկայեն որ առանց քեզմէ նամակ առնելու անմիջապէս գրեմ քե- զի որովհետեւ տէրութեան տուր- քը ոչ տարին չորս հինգ անգամ, այլ տարին քսան անգամ կը ժող- վեն և ինչպէս կը ժողվեն, կը կապեն կը ծեծեն, ոչ աչք կը նային ոչ գլուխ, ա՛խ ինչ սսեմ, երանի թէ միանգամ մեռնէինք, քանի որ ամէն օր կիսամեռ գեա- նաքարչ, անողորմ գաւազանի տակ մեր վիզ մեր գլուխ կը ջախ- ջախուի, մեր արիւն մեր արա- սունքի հետ կը խառնեն, երանի հազար երանի քեզի որ այսպիսի

անգիւ կը բացուէր ապագային ան- սուպ ջիւղ իրկինքը: Տօք. Բորջօմօֆ ամուսին կուզէր զայն, Եթէ ընդու- նի անօր կեանքին մասնակցիլ, Ժիվ- քա ունեցածին ամէնքը պիտի ունե- նայ թերեւս աւելին... բայց եթէ մերթէ, եթէ զոհարեցիր գաղտնա- թի մը համար եթէ սեմէն ներս ստունէ, այն ատեն... այն ատեն...

Այո այն ատենը զայն կը հրա- պուրէ ու կը վախցնէ, կը կանչէ ու կը ստուգանէ...

Անա թէ ինչու ժիվքան կը զող- ցողար թարգմանութեան վրայ. ա- անա թէ ինչու զիւսային ուսուցչու- ճին ուզած ներողութեան հսկասակ չէր հասկնար զայն—չէր կրնար կար- գալ անոր բոցավառ աչքերուն մէջ այս հզօր զգացման խորհրդաւոր փայլը, որ կը սեղմէր, կը զարթէր, մերթ կայրէր, մերթ կը ստանցէր անոր սիրտը...

Այս երկու աղջիկները մեծցած է- ին հասարակական տարբեր պայման- ներու մէջ. միեւնոյն գաղտնիքներով, ասոր համար բարեկամուէի է- ին, բայց տարբեր աշխարհադաս- ղութեամբ չնախադրուած գրեթէ մի- ևեւոյն գաղտնիքներէն, ասոր հա- մար չէին նմանիլ իրարու, ասոր համար յաճախ, ինչպէս խոստովանե-

ցաւալի գառն ժամանակի մէջ ա. զատ երկրի մէջ կը գտնուիս, մեր վիճակ Փարաւօնի գերութե- նէն աւելի գառն ու կոկածալի է երկու հարիւր զրուշի մալ տաս զրուշի տուրջի դիմաց կը տա- նին, սոյն երկու ոսկին զնայ արդէն, եղբայրդ բոլորովին տկար է և միայնգամայն ծերու- նին ոչ քաղաք կարող է երթալ, և ոչ ալ պարաք ընել կամ տուրքի համար մտածել, ճարահատեալ կատարուիմ ես մտածել ամեն մէկ մեր պակասութեանց համար, ուստի ես ալ առաջուց պետք է ցաւեր հոգամ, կը խնդրեմ որ նամակս առածնիդ պէս բարեհա- ճիս շուտով գտնէ 3 ոսկի զրկել մեզ, որ ես վճարեմ այն ամէն պահաջներ, չիմ կարող հայտաճ- կի երես կային յարպէս զի երես անիմ, ազաչեմ ձեռքս անոնց առ- յեւ պարզեմ որպէս զի քանի մը փաւա պարտք տան, այն ալ դի- տես մի մէծիւնէն մէկ ամսուան հինգ շուրջ տոկոս կուզեն, երանի քեզի որ քու աչք այս ցաւալի բաներ չես աեսներ մեր զժողով- ներկայիս, ա՛խ երանի թէ ապ- սոգութիւն լինէր, հաւատացի՛ր, որ կէս ժամ հոս չպիտի մնայինք, մեր կեանք կեանք չէ պարզապէս գոթալք, ալ և ձուկ առեր եմ պարտք ըրած եմ, երկու մէջ թիւ, գութանի խոփ շինել տուած եմ պարտքով, երկու մէջ թիւ ալ վեր- կիի համար նորէն պարտք, հոգի չկայ ըսինք, չկայ, չըան կը ձգեն մարդու վիզ անիրաւ ստի- կաններ կը քաշեն, այնպէս ուժ- գին կը զարնեն որ արիւն սղբիւ- րի պէս կը վազէ, շատ կաղաչեմ որ առանց խնդիրքս մերժելու

ցաւ, Սթօյչէվա «արիտոկրատուի» եւ սուրիններուն պէս» կը սեպէր ժիվքան, ասոր համար այս վերջի- նը զազանի պաղութիւն մը կը տա- ճէր զէպի զիւղային ուսուցչուհին, պաղութիւն որ այսօր առաջին ան- գամ դուրս ցայտեցող անոր բերնէն «ձայրանդութեան» անխոհեմ աւ- բաստանութիւնը:

Անոնց հոգիներն իրարու օտար է- ին:

Մէկուն սիրտը կը վառէր անձնա- զոհութեան երկնային-եթէ կայ երկ- նային-բոցով բոլոր թշուառներու, տառապողներու համար, փակուած գրեթէ անձնական հասարական երջանկութեան հոսանքի ու սիրոյ համար, միւսինը աւելի լայն նոյն անձնազոհութեան, նոյն բողբն զատ կը պարունակէր նաեւ կեանքի վա- խը, որ այս զոհարեութեան ար- գելք պիտի ըլլայ, և ուրիշ շատ մը ցաւեր, հասարական այս հպարտ աղջկան համար, որ պետք է իր ան- գիտ կեանքէն բաժնուի եւ ըն- կղմուի անհաւասար կուռի մորիկ- ներուն մէջ ու... խորտակուի...

Սթօյչէվա կը գործէր, կը տառա- պէր, կը կուռէր, կապրէր, ժիվքա կուզէր գործել, կուզէր տառապիլ,

անմիջապէս ստակ խրկես տա այժմ աշխարհիս վիճակն գէշ է չեմ ու- շեր գալդ, թէեւ գիշեր երազով ցերեկ խիլալով եմ, բայց ի՞նչ օգուտ, եթէ ապահովութեան ի- նի ալ չեմ համարեր կուգամ, թէ կրցայ Պայծառ հետս կը բե- րեմ: կը խնդրեմ որ մի մէջ թիւ ալ զատեն զրկես տամ Պայծառին հագնելիք առնեմ:

Կրկին ամուսին Մարգարտից կարօտալի բարեւեւի իմ պատ- ուական գլխաւորիս... Մարգ, մի կերպով չուզեր ստակդ տալ, բարբարոս անիրաւն, ուր կոտոր է, ձեզի չեմ ճանչնար մինչեւ Հաջին հոս շիդայ, խեղճ պար- տատէր մարդ է, չէ կարող տալ: Նոյնպէս... և... պիւղերու մար- գիկ ստակ մը չի տուին... կը խնդրեմ շուտ ստակ խրկես: Յատ- կապէս սէր և բարեւ կը յիշէ Մեր խնամին ու ծանօթ բարեկամնե- րը: Պայծառ ձեռքդ կը պահէ: Ողջ լէր:

Ձեզ միշտ յարգող կինդ Մարգրիտ

ԲՍԶ ՆԱՄԱԿ ԱՌ ԵՂԲԱՐԿ ԹՈՐԻԿԵԱՆ


«Շարժում» թիւ 522րդ. թուին մէջ կարդացի ձեր գրութիւնը իմ ան- ձիս նկատմամբ, չը պիտի զիջա- նէի ձեզի հետ հրապարակ գալ և հայ ժողովրդի ան մտքերը ըզ- բաղեցնել եթէ խնդիրը հանրա- յին չըլլար:

Դուք ձեր ինչ ինչ մութի մէջ եղած հաշիւները ժողովրդեան առջեւ չը մերկացնելու համար մեզի անծանօթ եղած խնդիր մը

կուզէր կուռիլ, կուզէր ապրիլ, մէկը չէր հոգար, կամ շատ քիչ, իրեն համար, միւսը չէր կրնար այս մտա- նողութենէ պրծիլ. մէկը կրած էր ալ իր խաչը, միւսը չէր համար ձախիր զայն կոտակը դնելու. առաջին մէջ գաղափարները կը լրացնէին զգա- ցունները՝ գաղափարները, երկրոր- դին մէջ գաղափարները կը կուռէին զգացուններուն հետ, կոյր զգացուն- ներուն հետ, հասարակութեան հետ ու մերթ անոնք կը յաղթանակէին, մերթ ասոնք. մէկը խաղաղ էր, գրեթէ աննշան իր սովորական մոխ- րագոյն գէմքին պէս, միւսը ամբողջ հրաբուխ էր հիմա, քիչ մը ետք խա- ղաղացած լծի ջուրեր, բայց միշտ աչքի զարնող գեղեցիկութեանը պէս:

Մէկուն անունը Սթօյչէվա Սթօյչէ- վա էր, զիւղային ուսուցչուհի, հիւս- նական վարժարանի ուսուցչի նկու- լէֆին նշանածը, խկ-Չիւսը ժիվքա Ռատքօվա էր, նախնական վարժա- րանի ուսուցչուհի, որուն համար մօթթօր Բորջօմօֆ կը խնդրէր:

Թատրակեց Անդրեաս Եսկրեան (Շարժակ) չի



իմ և Տիար Արապեանի վերադարձումը «Մանգուստին» մէջ երեւցածները ժողովրդեան կը ցուցնէք և ատոր իբր փաստ կը գործածէք այնպիսի մականուններ որոնց կարելի է ձեզմէ տիրացածներ լինին:

Իբրև է թէ ազգային դպրոցի մը յատկացուելիք շէնքի գընման համար հանգանակութիւններ եղած են Վառնա և Ռուսուք, բայց մանրամասն հաշիւը հակառակ ժողովրդի փափագանաց ձեռքէ տակ ճնշուած կը մնայ: Գալով 300 Ֆրանկ ըստ ձեր աստիճան հասուցած ֆրանսուս: Ես իբր յանձնաժողովի գանձապահ հանգանակուած գրամէնքովս կար 787 լէվ արծաթ նափօթիօնին 22.80 եղած ատենը, որուն վրայ ըստ օրինի 33.60 տոկոս աւելցնելով 820.60 յանձնցի յանձնաժողովին նաքօթիօնին 20.60 եղած ժամանակ. արդ Մըթր-Թորիկեան եղբարք ընթերցողաց կը թողում հարցնել թէ ձեր ո՞ր խելագատակէն կը հանէք 300 Ֆր. ֆրանսը, այս խնդրին մէջ ե՞ս կը ֆրանսուս թէ ազգը. դուք սեղանաւոր ըլլալն ո՞ւր է որ այդչափ բազազրեալ տոկոսներու մէջ կը մտնաք, բայց կարծեմ տոկոսաբեր հաշիւները չի նմանիր Տիւրիկի փայտերու ու եղներու հաշուին:

Իսկ գալով տան վարձքին կըսէք որ Տիար Արապեան տանը վարձքը չէ վճարած, բայց Տիար Արապեան ժամանակին վճարած է վարձքը. որը քովս կը մնայ ազգայնոց փափաքանաց համաձայն, քանիցս առաջարկեցի ձեզ տունը եկեղեցիին անունին դարձնել և դրամը յանձնել պանքային. բայց չեմ գիտեր դուք ինչ մութ հաշիւներով մերժեցիք, ուզելով տունը անհատի մը անունի կապել, բայց այդ ժողովուրդի կամքին հակառակ գալով ստիպուեցան Պ. Փ. Գերապատիւ հօրը խնդիրը տեղեկացնել և որի հրահանով ու ժողովրդի կամքով դրամները մեր քով պահած ենք մինչև Հայր սուրբը Պարկազ ժամանէ:

Ինչքան ձեր Աստուածատուրեան ընկերին հետ տունը անհատի մը անունի քարձնելու ջանքերնուզ անյաջողութենէն կատղած, սկըսեցիք սուտեր յօրինել խօսալ ու գրել և կեղծ ազգասէրներ ձեւաւանալ ձեր բազմերանք գոյները երեւան չալու համար:

Մէկ երկու խօսք ալ ձեր ըրած ու կատարած գերին: Ինչքան չէ՞ որ 102 դեկտ. 8ի թաղական խորհրդոյ ընտրութեան ժամանակ փողոցէ փողոց կը վազվառէիք ձեր այդ պաշտած Աստուածատուրեանի: Հետ վակօններու տակ ու մէջ կը մլաւէիք խեղճ հայաստանցիները համոզելու որ

ձեր «անձնական ինչ ինչ հաշիւները» կարգադրելու համար ձեզի անգամ ընտրեն ազգին գործերուն մէջ: Միթէ կուրանա՞ք, բայց ժողովուրդը լաւ գիտէ թորիկեան եղբարք Միջնակ Մըթրիին կատարած աղտոտութիւններն թաղական խորհրդոց ընտրութեան ժամանակ, խորհրդարանին դռան առջեւը, խեղճ հայաստանցիներուն ումնաց խաբելով և ումնաց բռնազրօսիկ միջոցներով ձեռքերնէն քուէին թղթերն առնելով փոխարէնը իրենցը առնել ստիպելով և որը սակայն մերկապարտնոց խայտառակուեցու հայաստանցիի մը ընտրողական ժողովին արգարապէս բողոքելուն պատճառաւ:

Հոգ չէ թէ հրապարակ պիտի ելլայ մենք այժմէն կըսենք, թորիկեան եղբարք առկախ մնացած հաշիւները փակուելու համար ազգային դպրոցը տարի մը դոցուելու թող դատապարտուի... Վճօթ Թորիկեան եղբարք այս ընթացքին և հաղար նախատիք իրենց կատարած գերին:

Իմ առաջին և վերջին պատասխանս

Նկատելով որ ասկէ վերջ չը պիտի պատասխանեմ Թորիկեան եղբարք և ոչ մի գրութեան, ուստի կոչ կընեմ Պարկազի հայ հասարակութեան որ հասկցող դասակարգէն մարմին մը կազմէ իմ և Թորիկեան եղբարք կատարած գերն առաջադիւստութիւններն ճանչցնելու համար և ատով փրկել թէ լրացրութեան մէջ ըսի ըսաւ ի երկար բացազանչութիւններն և թէ ընթերցողաց զգալիք ձանձրոյթը:

Ահա քաջութիւնը, ստուերի տակ չէ ինչպէս դուք կըսէք այլ լոյսի և ճշմարտութեան վրայ է:

Միսակ Մըսղոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական նախարարը պատերեր է 300 հազար թարմ գալէթա պատրաստել, որովհետեւ եղած հիները՝ մզկեր, ֆրասուեր են: 40 հազար քիլօ լիմօնի թթու եւս պատուիրած է:

— Ներքին գործոց նախարարը որոշած է Սօֆիայի բարձրագոյն դպրոցէն աւարտածներէն զաւապետներ կարգել եթէ համաձայնողներ ըլլան:

— Սօցիալիստները, Գարազեւիստները Յանգովիստները և Սթոյիլովիստները միացած կուզեն միթիկներ սարքել բողոքելու համար պաշտօնեաներուն վերաբերեալ օրէնքները կասեցնելուն գէմ:

— Անցեալ օր պատերազմական նախարար գնդապետ Պ. Սալօֆի իր քովը կանչեր է Սօֆիայի մէջ

գտնուող զօրքերուն հրամանատարները, քանի մը խորհուրդներ տուեր է անոնց և տեղեկութիւններ հարցուցեր է իրենց զօրաբաժիններուն մասին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուս աստրիական դեսպանները պուլկար կառավարութեան ընդհանուր դեսպանաց գիմուսին վրայ, Թ. դռնէն արցուցեր են թէ ինչու նոր զօրք կը լեցնեն Պուլկարի սահմանները:

Թուրքիա պատասխանած է թէ ոչ թէ նոր զօրքեր են, այլ սահմանազխուելու զանազան կէտերուն վրայ արգէն գտնուած զօրքերու տեղափոխութիւն կատարուեր է:

— Ռուս և աստրիական դեսպանները գիմած են միւս պետութեանց դեսպաններուն որ միասին ձնշուճ գործ գնեն Թուրքիոյ վրայ որ միջոցներ ձեռք առնէ քրդերը զպել, որպէսզի հայերը չը նեղեն, որովհետեւ ասոր հետեւանքը պիտի ըլլայ հայերու ապստամբութիւն մը որու պատճառով և Մակեդոնիոյ ռէֆորմներու իրագործումը կընայ յետաձգուիլ:

ՌՈՒՍԻՍ

Ռուս կառավարութիւնը Ամերիկեան կառավարութեան Գիշի-նէֆի հրէաներու շարքին առթիւ եղած գիտողութեան պատասխանած է որ ինք ինչպէս չի խառնուիր ուրիշ երկիրներու ներքին գործերուն այնպէս ալ չի ուղեր որ ուրիշները խառնուին իր ներքին գործերուն:

— Ճարտնական թերթերը մեծ գովեստով կը խօսին ռուս պատերազմական նախարար Գուրաբօթքի մասին և պտնի խաղաղութեան աւետաբեր կանուանեն:

Նախարարը կը բնակի «Երպաս» պալատին մէջ իբրև կայսեր հիւր. պատիւ մը որ մինչև օրս տրուած է միայն օտար իշխաններու:

— Բէթերպուրիէն կը հաղորդեն որ ելեւմտից նախարար Վիթէ կայսերական քանձէր պիտի նշանակուի: Պաշտօն մը որ Բօրչաքովէն վերջը գոյութիւն չունէր:

ՍԵՐՊԻԱ

Ալէքսանտր թագաւորին անձնական թղթերուն մէջ գտնուեր է ծրար մը, որուն մէջ պահուած է թագաւորական տան թշնամիներու անուններուն ցանկը, որոնց կեանքը պիտի վտանգուեր

եթէ Ալէքսանտր ոչ չմտար: Արմատական «Օրիէկ» թերթը կը պահանջէ որ փութով քննուին Ալէքսանտրին թղթերը, հասկցուելու համար թէ որոնք են անոր գործերուն մեղսակիցները: — «Մալի ժուրնալ» թերթը խիստ յարձակում կը գործէ Ռուսիոյ գէմ հոն ապրող սերպ սպաներուն գէմ եղած նախատինքներուն համար:

— Եւրոպական թերթերը կը հազորդեն որ Անգլիական կառավարութիւնը ստորագտեղեկութիւններ ունի որ Մերպիոյ նոր թագաւորը մասնակցութիւն ունի եղբր հանգուցեալ թագաւորական շրջին սպանութեան մէջ. ասոր համար ալ պիտի գիմէ բոլոր կառավարութեանց որպէս զի անոնք ալ հրաժարին նոր թագաւորը ճանչնալու մտքէն:

— Սերպիական թերթերը կը բողոքեն դաւադիրները գտնուելու թարկելու համար եղած պահանջներուն գէմ և կը յայտարարեն որ եթէ գաւառ անդի ունենայ միապետականութեան վարկը պիտի իյնայ որովհետեւ Ալէքսանտր շատ մը ոճիրներ գործել տուած և ուղած է իր հայր Միլանը սպաննել:

— Թագաւորը տրամադրութիւն ունի Ալէքսանտրին և Տրակային գիակները հանել աւալ և արքայական շուքով թաղել:

ԹԱՏՐՈՆ ԻԿԱ

ՀԱՃԻ ԲԱՆԱԲՕ

Ներկայացուին ըՆՏԷԺՏԱՆ Հայ դերասանական խմբին առաջնորդութեամբ Պ. Ա. ՊԱՊԱՆՆԻ: 1903 Յունիս 21 շաբաթ ելեկոյ Քիշք ժամ 9ին պիտի ներկայացնէ Ա. — Խիստ ծիծաղալար զաւեշտ մկ արար Պուքէշէ նոր հասած Հայ ազգի հանրածանօթ գովիկ Հաճի Յակորի կողմանէ: Բ — Ամեն լեզուէ զանազան երգեր Օր. Էլէնայի կողմէն: Գ. — Տեսակ, տեսակ երգեր և պարեր 10 տարեկան Բօմանուհի Օր. Քլէմանթինի կողմէն: Դ. — ԱՐԵԱՆ ԲԻՄԸ, կատակախառն թատերախօս 3 արարուած: ՄՈՒՏԻՔ 50 ՍԱՆԹԻՄ

ՄԱՍԻ ՆԵՐԿ

— 0 —

ՀՐԱՇԱԼԻ ԹԱՋՈՂՈՒԹԻՒՆ Դիւիկ Պ. Ա. Ջարպինեկեանի վաղնա:

ՕՏՎՈՐՆԻԿՆԷ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна